✓ **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

✓ **Խնդրում ենք մանրամասն ծանոթանալ սույն Պայմանագրի պայմաններին**

✓ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կայք (այսուհետ՝ Կայք)՝ https://greeninvest.ai/ հարթակ, որտեղ տեղադրված են տարբեր իրավաբանական անձանց կողմից ծառի օտարման և դրա շրջանակներում վերջիններիս կողմից առաջարկվող ծառայությունների վերաբերյալ հայտարարություններ:

Հրապարակային պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր)՝ սույն Պայմանագիրը և դրա բոլոր փոփոխությունները, լրացումները և հավելվածները:

«**Օֆերտա** »՝ «ՅԵՐԲԱ» ՍՊԸ-ի կողմից ծառի վաճառքի հրապարակային առաջարկ: Պայմանագրում օգտագործվող օֆերտան հասկացվում է որպես հրապարակային օֆերտա, բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանագրի տեքստից ուղղակիորեն կբխի այլ բան:

Վաճառող և/կամ Կատարող ՝ «ՅԵՐԲԱ» ՍՊԸ, ով հանդիսանում է ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Երվանդաշատ գյուղում հիմնված նուշի այգու այգետեր և Գնորդին վաճառում է, իսկ Գնորդը ձեռք է բերում Վաճառողի՝ նշված այգում տնկված նուշի ծառ/եր/, ինչպես նաև մատուցում է Գնորդին վաճառված ծառի խնամքի և սպասարկման Ծառայություններ: Ընկերության վերաբերյալ մանրամասն տվյալները տեղադրված են Կայքում:

Գնորդ և/կամ Պատվիրատու ՝ իրավաբանական անձ, ով ձեռք է բերում Վաճառողի կողմից Կայքի միջոցով վաճառվող ծառ:

Ծառայություններ ՝ ծառի օտարման հետ միասին տրամադրվող խնամքի և սպասարկման ծառայություններ, որոնք իրենց մեջ ներառում են հետևյալը.

Խնամքի ծառայությունն իր մեջ ներառում է՝

- ✓ Ծառի էտ, պարարտացում, բուժում, ջրում, մելորացում.
- ✓ Ծառի խնամք և գյուղատնտեսական անհրաժեշտ այլ միջոցառումների իրականացում.

Սպասարկման ծառայությունն իր մեջ ներառում է՝

- ✓ Գյուղատնտեսի խորհրդատվություն.
- ✓ Բերքահավաքի կազմակերպում.
- ✓ Բերքի իրացում.

QR code՝ *իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ, որով արտացոլվում են ծառի նկատմամբ իրավունքի ձեռքբերումը, իրավունքի սուբյեկտը, իրավատերը, իրավունքի սուբյեկտի և իրավատիրոջ փոփոխությունները, ծառի նկատմամբ ձեռքբերված իրավունքի զիջումը երրորդ անձի, որը սույն*

պայմանագիրը կնքվելուց հետո գեներացվելու և ուղարկվելու է Գնորդին իր կողմից նախընտրած տարբերակով՝ կամ Էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության միջոցներով (WhatsApp, Viber, Telegram և այլն): QR կոդով Գնորդն հնարավորություն է ունենալու հետևելու ծառի հասունացման ամբողջ ընթացքին՝ գնման պահից մինչև բերքահավաքը: Այն հանդիսանում է նաև Գնորդին անհատականացնող և նույնականացնող միջոց:

Պայմանագրում կարող են օգտագործվել նաև այլ հասկացություններ, որոնք սահմանված չեն վերոնշյալ բաժնում: Այս դեպքում նման հասկացությունների մեկնաբանումն իրականացվում է Պայմանագրի տեքստին և ընդհանուր նշանակությանը համապատասխան:

Գնորդը՝ Կայքում ծառի վաճառքից և ծառայություններից օգտվելու համապատասխան հայտ տալով՝ հայտարարում է, որ ծանոթացել է սույն Պայմանագրի պայմաններին և ամբողջական ու անվերապահ ընդունում է դրանք (Ակցեպտ):

✓ ՊԱՅՄԱՆԱԳ ՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Սույն պայմանագրով Վաճառողը վաճառում է, իսկ Գնորդը ձեռք է բերում Վաճառողի՝ ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Մրգաշատ գյուղում Վաճառողի սեփականությունը հանդիսացող հողամասերի վրա հիմնված նուշի այգում տնկված նուշի ծառ/եր/, որն առուվաճառքի ձևակերպումից հետո չի անջատվելու հողամասից (այգուց) և շարունակելու է մնալ Վաճառողի այգում, որի խնամքն ու սպասարկումն իրականացվելու է Վաճառողի կողմից, իսկ Գնորդը պարտավորվում է վճարել դրա դիմաց Պայմանագրով նախատեսված կարգով և պայմաններով: Ծառի ձեռքբերումը Գնորդի համար երաշխավորում է հետագա եկամուտ՝ համաձայն Կայքի Այգիներ բաժնում տեղադրված եկամտաբերության հաշվիչ-մեթոդաբանության, որը որպես Հավելված կցվում է սույն պայմանագրին և հանդիսանում է դրա անբաժանելի մասը, այսուհետ՝ Հավելված:

2.2. Ծառի գնմամբ Գնորդին տրվելու է QR կոդ, որով վերջինս հնարավորություն է ունենալու հետևել ծառի հասունացման ամբողջ ընթացքին՝ գնման պահից մինչև բերքահավաքը:

2.3. Ծառի բերքատվությունն ու եկամտաբերությունը որոշվում է Կայքի Այգիներ բաժնում տեղադրված Հավելվածի համաձայն:

2.4. Մինչև Ծառի բերքատվության առաջին տարին՝ Ծառի խնամքի և սպասարկման արժեքը ներառվում է սույն պայմանագրի 3.1. կետով սահմանված Ծառի ձեռքբերման արժեքի մեջ, որի բաշխումը Գնորդին իրականացվում է Այգետիրոջ (Վաճառողի) ներքին ընթացակարգերով սահմանված կարգով և ժամկետներում և մինչև նշված ժամկետը Վաճառողի կողմից իրականացված խնամքի և սպասարկման ծախսերի արժեքը համարվում է Գնորդին տրված կանխավճար:

2.5.Վաճառողը յուրաքանչյուր տարվա վերջում իր Կայքի միջոցով Գնորդին ներկայացնելու է հաշվետվություն իր կողմից մատուցված խնամքի և սպասարկման ծառայությունների վերաբերյալ:

2.6. Ծառի կորստի ռիսկը կրում է Վաճառողը և Ծառը ապահովագրվելու դեպքում՝ ապահովագրական պայմանագրով նախատեսված Շահառուն դառնալու է Վաճառողը:

2.7. Ծառի կենսունակության տևողությունը 25 տարի է, իսկ բերքատվությունը սկսվում է ծառի տնկման 3-4-րդ տարվանից սկսած:

2.8. Վաճառողը կարող է տեսաձայնագրել իր այգու՝ Գնորդի ծառի գտնվելու հատվածի բոլոր տարածքներն անվտանգությունն ապահովելու նպատակով:

2.9. Գնորդը կարող է ամսվա մեջ մեկ կամ երկու անգամ այցելել նուշի այգի՝ ստուգելու իր Ծառի վիճակը: Նման այցելությունները կարող են իրականանալ Վաճառողի թույլտվությամբ և Վաճառողի սահմանած ժամկետներում և պայմաններով՝ Վաճառողի ներքին ընթացակարգերին համապատասխան: Գնորդը պարտավոր է դրսևորել պատշաճ վարքագիծ, պահպանել Վաճառողի սահմանած կանոնները՝ չվնասել Վաճառողի և/կամ այլ Գնորդների ծառերին և Վաճառողի բնականոն աշխատանքը: Բողոքներ և դժգոհություններ ունենալու դեպքում՝ դրանք Վաճառողին ներկայացնել գրավոր ձևով՝ հնարավորություն տալով Վաճառողին ծանոթանալ բողոքին և հիմնավորված լինելու պարագայում՝ համապատասխան միջոցներ ձեռնարկել բողոքի համար հիմք հանդիսացող հանգամանքները վերացնելու և շտկելու համար: Սույն կետով սահմանված տարածքի այցելության կանոնները տեղադրվելու են Կայքում:

2.10. Գնորդն իրավունք ունի իր կողմից ձեռքբերված ծառերը ցանկացած ժամանակ և իր կողմից նախընտրած գնով օտարել և/կամ նվիրել երրորդ անձի՝ Կայքում տեղադրված Կայքի օգտագործման կանոններով սահմանված կարգով:

2.11. Գնորդի կողմից ձեռքբերված ծառերը ցանկացած ժամանակ կարող են օտարվել Վաճառողին՝ դրանց ձեռքբերման արժեքով՝ ծառերի համար Վաճառողի կողմից վճարված հարկերի գումարը նվազեցնելու պայմանով՝ հետևյալ ժամանակացույցով.

✓ մինչև 10 հատ ծառի դեպքում՝ Գնորդի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո 5/հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում.

10-ից 50 հատ ծառի դեպքում՝ Գնորդի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո 4/չորս/ ամսվա ընթացքում.

50-ից 100 հատ ծառի դեպքում՝ Գնորդի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո 6/վեց/ ամսվա ընթացքում.

100 հատից ավել ծառի դեպքում՝ Վաճառողի կողմից սահմանված ժամկետներում.

3 . ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. 1(մեկ) հատ Ծառի արժեքը սահմանվում է սույն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Կայքի Այգիներ բաժնում տեղադրված Հավելվածով: Ծառի գինն իր մեջ կարող է ներառել Ծառի խնամքի և սպասարկման ծառայությունների արժեքը:

3.2. Ապրանքի համար վճարումը կատարվելու է Կայքում առկա էլեկտրոնային վճարային համակարգով:

4 . ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

4.1. Ընդունելով սույն Պայմանագիրը՝ Գնորդը տալիս է համաձայնություն՝ Վաճառողի և Կայքի իրավատիրոջ կողմից իր անձնական տվյալների մշակմանը, ներառյալ՝ ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ծննդյան վայրը, անձնագրային տվյալները, փաստացի բնակության վայրը, էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային հեռախոսահամարը (քաղաքային, բջջային, գործնական) և այլն:

4.2. Վերոնշյալ անձնական տվյալների մշակումն իրականացվելու է անձնական տվյալների խառը մշակման եղանակով (հավաքագրում, համակարգում, կուտակում, պահպանում, հստակեցում (թարմացում, տեղադրում կրիչների վրա, օգտագործման եղանակների փոփոխություն, տարածում), ապանձնավորում, ուղեփոխում, անձնական տվյալների ոչնչացում) Վաճառողի և Կայքի կողմից առաջարկվող Ծառայությունները մատուցելու նպատակով: Տվյալները մշակվում են բացառապես հետևյալ նպատակների համար՝

✓ Անհատականացված ծառայությունների մատուցում, պայմանագրերի և/կամ համաձայնագրերի կատարման ապահովում.

✓ Ծառայությունների որակի բարելավման, օգտագործման հարմարավետության, նոր Ծառայությունների մշակման ապահովում.

✓ Կայքի օգտատերերի նույնականացման ապահովում.

✓ Կայքի օգտատերերին համապատասխան տեղեկությունների, նորությունների տրամադրման ապահովում.

✓ Նոր ապրանքների և/կամ ծառայությունների առաջարկում, գործող առաջարկների բարելավում.

✓ Գովազդային նյութերի թիրախավորում, մարքեթինգային գործունեության պլանավորում և

իրականացում.

- ✓ Անանուն տվյալների հիման վրա վիճակագրական և այլ ուսումնասիրությունների ապահովում.

4.3. Վաճառողը պահպանում է Գնորդի անձնական տվյալները՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

4.4. Ընդունելով սույն Պայմանագիրը՝ Գնորդը տալիս է իր համաձայնությունը և իրավունք է վերապահում Վաճառողին և Կայքին՝ առանց լրացուցիչ տեղեկացման և/կամ Գնորդի հետ համաձայնեցման Գնորդի անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց՝ բացառապես ՀՀ օրենսդրության շրջանակներում դրանք օգտագործելու նպատակով:

4.5. Գնորդը համաձայն է և թույլ է տալիս Վաճառողին և Կայքին օգտագործել նրա անձնական տվյալները մարքետինգային հետազոտություններ կատարելու նպատակով, ինչպես նաև իր հայեցողությամբ Գնորդի էլեկտրոնային հասցեին կամ հեռահաղորդակցության միջոցներին (WhatsApp, Viber, Telegram և այլն) ուղղարկել Վաճառողի և Կայքի գովազդային և տեղեկատվական նյութերը, նորությունները և (կամ) տեղադրել դրանք հասանելիության տարածքում:

4.6. Գնորդը գիտակցում և ընդունում է, որ Վաճառողի և Կայքի կողմից Ծառայությունների պատշաճ մատուցման նպատակով Գնորդի անձնական տվյալները Կայքում պահպանվում են Հավելվածով սահմանված ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը հեռացվել չեն կարող:

5 . ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Կայքում տեղադրված սույն Պայմանագիրը համարվում է հրապարակային պայմանագիր:

5.2. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից Օֆերտան ընդունելու և համապատասխան վճարումը կատարելու պահից և գործում է մինչև Կողմերի լրիվ պարտավորությունների կատարումը, եթե այլ բան սահմանված չէ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Օֆերտան ընդունված է համարվում Գնորդի կողմից Կայքում առկա համապատասխան հայտը լրացնելու (Ակցեպտի) պահից:

5.3. Սույն Պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած բոլոր տեսակի վեճերը և տարաձայնությունները կարգավորում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը ՀՀ օրենսդրության համաձայն:

5.5. Սույն Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են սույն Պայմանագրի կնքման կարգով:

5.6. Սույն Պայմանագիրը կազմված է հայերենով, երկու հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.7. Պայմանագիրը Համարվում է Ակցեպտավորված այն պահից, երբ Գնորդը Կայքի միջոցով ծանոթանում է Պայմանագրին և համապատասխան հատվաշում տեղադրելով “V” նշանը հաստատում է պայմանագիրը: Գնորդի կողմից Պայմանագիրը հաստատելուց հետո՝ Պայմանագիրը զետեղվելու է Գնորդի անձնական գրասենյակի փաստաթղթեր բաժնում: Մանրամասն տեղեկությունները զետեղված են Կայքի օգտագործման պայմաններում (քաղաքականությունում):

5.8. Գնորդը, միանալով սույն Պայմանագրին, հավաստիացնում է, որ ծանոթացել է սույն Պայմանագրի և Կայքի օգտագործման պայմաններին (քաղաքականությանը), դրանք իր համար հասկանալի են և, որ ինքն ընդունում է դրանք ամբողջությամբ: